Վահան Թոթովենց

Լույսի և տրտմության ծաղիկներ

Մի՛ արթնար, քնացի՛ր…
Ներե ինձի, որ մտա քու ննջարանդ գիշերի այս ուշ պահին…
Թեև սառած, բայց ես չեկա զիս տաքցնելու քու շունչովդ…
Թեև տրտում և մինակ, բայց ես չեկա աստղազարդելու իմ միգամած երկինքը քու նայվածքներովդ…
Ես չեկա այստեղ՝ վրդովելու քու երազներդ…
Ես չեկա թեթևցնելու իմ վիշտը քու անկողնիդ շուշաններն համբուրելով,
Ես կանցնեի քու ննջարանիդ լուսամուտին առջևեն…
Ներե՛ իմ սրտիս, որ ննջարանիդ լուսամուտին առջև… տրոփեց…
Անցնելուս ես տեսա այս աշնանային ծաղիկը՝ ինկած գետնին վրա…
Ծռեցա և բարձրացուցի զայն՝ բերելու և մեղմիվ դնելու քու կուրծքիդ վրա…
Ես բաղձացի, որ անիկա վերածաղկի քու կուրծքիդ վրա, աշնանային այս որբուկ ծաղիկը…
Ներե՛ ինձ, որ ես մտա քու ննջարանդ կես գիշերին…
Ես չեկա իմ վշտիս համար…
Ես միայն բաղձացի փրկել կյանքը այս աշնանային ծաղիկին…

***

«Մի՛ խռովիր, Սիրելի՛ս, լրացուր քերթվածդ…
Ներե՛ ինձ, որ եկա ստեղծագործության գերագույն ժամին…

Ես երբեք չբաղձացի խզել ստեղծումիդ լռությունը . . .

Կը թողում քեզ քու ներշնչումի քաղցրության և երաժշտության մեջ առանց ավելորդ զրույցներու . . .

Մնաս բարով, լրացո՛ւր քերթվածը . . .

«Կեցի՛ր, մրմնջեցի ես, բռնելով իր թևեն, քու ներկայությամբդ ամեն ինչ կատարյալ է . . . »
«Ո՛չ, ըսավ անիկա, ներշնչումը պետք է հասնի իր

հաղթական լրումին»:

Ու անիկա դուրս գնաց լռությամբ, թողելով զիս իր մարմինեն փրփրած բույրի ալյակներուն մեջ…

Ո՞վ գեղեցիկը և ամենակատարյալը բոլոր ստեղծագործության, ինչպե՞ս լրացնել անլրիվ մը լրիվ թողելով . . .

***

Իր կյանքի վերջին վայրկյաններն էին, երբ ես մոտեցա սնարին:

«Մի՛ տրտմիր, ըսավ անիկա, ցուցնելով ինձ տախտակամածին վրա տարածված արևուն տաքուկ շողերը:
Քեզի՛, Սիրելի՛ս, վայելքը արևու ճաճանչին, քեզի վարդերը և պատուհանին ալպյան մանիշակները…»:

Ես շուրջս նայեցա: Անոնք բոլորը գեղեցիկ էին:
Դարձյալ նորեն իմ սիրուհիին, Անոր աչքերը գոցված էին վարագուրելով վերրջալույս մը իրեն ետին: Շրթունքները տժգուն էին և խաղաղ…

Մահը դուրս ելած էր, և ամեն ինչ լուռ էր . . .
Ես դարձյալ նայեցա շուրջս և չգտա ո՛չ վարդ, ո՛չ արևու շող և ո՛չ ալ մանիշակներ…
Ես դառնորեն լացի և ըսի՝

«Քու կյանքեն հեռու ո՛չ շող կա և ո՛չ ալ ծաղիկ . . .»:

***

Խաչե՛ զիս քու կուրծքին վրա և օծե՛ իմ հոգեվարքս քու կուսական բույրերով…

Երգ մը կաթե քու բուստերեդ իմ վերջալուսվող աչքերուս խորքը…

Լամ բուրներովդ զգվե՛ զիս և թո՛ղ ես բույր տանիմ մահվան…

Զիս խաչե քու կուրծքիդ վրա և փաթթե քու շուշաններովդ…
Քու մեկ երգովդ, հոգիեդ բոխած և մեկ շողովդ, աչքերեդ արշալուսված՝ դամբանական խավարին մեջ ես արևներ կը վառեմ…
Քու մեկ շողովդ կստեղծեմ գարուն մը՛ անկախ գարունեն…
Ես մայիսով կը պճնեմ մահվան միգամած սիրտը…
Քու մեն մի մրմունջեն ես քնարնե՛ր կստեղծեմ.
Ինչո՞ւ չարթնցար՝ մինչև որ ես քեզ չհամբուրեցի…
Ինչո՞ւ չքնացար՝ մինչև որ ես քեզ չհամբուրեցի…
Ինչո՞ւ կարտասվես քաղցրորեն, երբ ես դողդոջուն համբույրով կը մրմնջեմ՝

«Ես քեզ կը սիրե՛մ…»:

Ինչո՞ւ իմ բացակայությանս միայն դու կերգես…
Ինչո՞ւ դու զիս կը գրկես և կը սեղմես կուրծքիդ անձկանոք՝ միայն իրիկնամուտի ոսկյա ալիքներուն մեջ…
Ինչո՞ւ դու կին ես և այնքա՛ն քաղցր…
Ինչպե՞ս է, որ դու կին ես և այնքա՛ն քաղցր…

***

Ես կը բաղձամ և կը կարոտիմ, որ դու հպիս իմ երիտասարդ երազներուս նոր բացված կարմիր վարդերուն քու երգիդ և շողերուդ ալիքներով…
Ես կը բաղձամ և կը կարոտիմ, որ դու ճանչնաս իմ վիշտը, անիկա առաջին ծաղիկն է քու էությանդ:
Իմ օրերս երկու եղանակ ունին միայն գարուն է զեփյուռներով և փթթումներով, երբ դու կանցնիս իմ լուսամուտիս առջևեն…
Աշուն է ցուրտ, միգամած և քարի պես ծանր մնացյալ իմ բոլոր օրերս…

***

Երբ իմ լուսամուտիս առջև գարնան առաջին վարդը բացվեցավ, ես չմոտեցա երկյուղածությամբ և չհոտոտեցի…

Անիկա էր, որ արևի շողերուն հետ իմ արցունքներովս հուզվեցավ…

Օր մը, երբ անիկա թոշնած էր, հիշեցի հանկարծ, որ դու ինձ ըսիր.

Գարնան առաջին ծաղկին հետ քեզի բույր պիտի ուղարկեմ գերեզմանեն…»

Վարդը թոշնած է հիմա, ինչպես քու հոգին…
Ես կսպասեմ ուրի՛շ գարուններու…

1918 թ.